ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

24 դեկտեմբերի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Գայանե Ալլահվերդյանը, Անահիտ Բաղալյանը, Արթուր Դավթյանը, Անդրանիկ Թամազյանը, Արկադի Թամազյանը, Տելեմակ Աղվանյանը, Սենիկ Չերչինյանը, Տիգրան Պապոյանը, Արամ Ռամազյանը, Մանվել Ռամազյանը, Թագուհի Վարոսյանը, Աբել Տիտանյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝ Գոռ Հովվյան, Շողիկ Քառյան, Սամվել Թորոսյան,Կարինե Սիմոնյան, Արթուր Մանուկյան ,Արթուր Շախկուլյան, Աստղիկ Ամիրբեկյան, Ալավերդի համայնքի վարչական տարածքների ղեկավարներ, համայնքապատկան ՀՈԱԿ-ների տնօրեններ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղումաշյանը

Նիստը արձանագրում էր ՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հեղինե Ճիճիլյանը

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24 -Ի ԹԻՎ 15 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 65-րդ հոդվածի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 15 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 15 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.

1.2 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

1.3 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի 2025 թվականի վարձատրության չափը որոշելու մասին.

1.4 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի 2025 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

1.5 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին.

1.6 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների գնացուցակը հաստատելու մասին.

1.7 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների գնացուցակը հաստատելու մասին.

1.8 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի 2024 թվականի տարեկան բյուջեի նախահաշիվներում փոփոխություն կատարելու մասին.

1.9 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի 2025 թվականի տարեկան բյուջեի նախահաշիվները հաստատելու մասին.

1.10 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի 2024 թվականի տարեկան բյուջեի նախահաշիվներում փոփոխություն կատարելու մասին.

1.11 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի 2025 թվականի տարեկան բյուջեի նախահաշիվները հաստատելու մասին.

1.12 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին

1.13 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Արևածագ բնակավայրում նոր դպրոց կառուցելուն նախնական համաձայնություն տալու մասին.

1.14 Ալավերդու համայնքի Ալավերդի քաղաքի, Սանահին կայարան թաղամաս, 14/2 հասցեում գտնվող, կադաստրային քարտեզի 06-002-0200-0047 ծածկագրով, 0.00177 հա մակերեսով հողամասն, ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին.

1.15 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-060-0208-0079

ծածկագրով, 0.04623 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահողն օտարելու մասին.

1.16 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, շահումյան փողոց, 1/24 հասցեում գտնվող, կադաստրային 06-002-0150-0427 ծածկագրով, 0.00816 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն օտարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 162-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերի՝

համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 1-34 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 01-ից:

Որոշումն ընդունվեց.

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 163 - Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Որոշել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի 2025 թվականի վարձատրության չափը՝ 465000 (չորս հարյուր վաթսունհինգ հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 164-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի 2025 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Ալավերդու Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, բացառությամբ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություն և լրացում կատարելը, որը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 165-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետով՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 166-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՇՆՈՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի կողմից 2025 թվականին մատուցվող վճարովի ծառայությունների գնացուցակը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 01-ից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է 167-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՕՁՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի կողմից 2025 թվականին մատուցվող վճարովի ծառայությունների գնացուցակը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 01-ից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է 168-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՇՆՈՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ի 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրենի զեկուցագիրը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի 2024 թվականի տարեկան բյուջեի նախահաշիվներում կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման գործողությունները տարածվում են 2024 թվականի դեկտեմբերի 16-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է 169-Ն/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՇՆՈՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ

ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ի 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***Զեկ.՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի 2025 թվականի տարեկան բյուջեի նախահաշիվները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 01-ից:

Որոշումն ընդունված է. /կցվում է 170-Ն/

ԿՈՂՄ- 15 ԴԵՄ -0 ՁԵՌՆՊԱՀ -0

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՕՁՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ի 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***Զեկ.՝Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրենի զեկուցագիրը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ՀՀ Լոռու մարզի «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի 2024 թվականի տարեկան բյուջեի նախահաշիվներում կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման գործողությունները տարածվում են 2024 թվականի նոյեմբերի 01-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Որոշումն ընդունված է. /կցվում է 171-Ն/

ԿՈՂՄ- 15 ԴԵՄ -0 ՁԵՌՆՊԱՀ -0

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՕՁՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ի 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***Զեկ.՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի 2025 թվականի տարեկան բյուջեի նախահաշիվները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 01-ից:

Որոշումն ընդունված է. /կցվում է 172-Ն/

ԿՈՂՄ- 15 ԴԵՄ -0 ՁԵՌՆՊԱՀ -0

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***Զեկ. ՝Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել.
   1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2025 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի, որից՝

      ա. եկամուտների գծով՝ 3993098.28 հազար դրամ,

      բ. ծախսերի գծով՝ 4540274.59 հազար դրամ,

      գ. Ազատ մնացորդը՝ 547176.31 հազար դրամ:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին՝

   1) համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև.

   2) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

3 .Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագող հարաբերությունների վրա

Որոշումն ընդունված է. /կցվում է 173-Ն/

ԿՈՂՄ- 15 ԴԵՄ -0 ՁԵՌՆՊԱՀ -0

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱԾԱԳ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆՈՐ ԴՊՐՈՑ ԿԱՌՈՒՑԵԼՈՒՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Արևածագ բնակավայրում նոր դպրոց կառուցելուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրան պահից:

Որոշումն ընդունված է. /կցվում է 174-Ա/

ԿՈՂՄ- 15 ԴԵՄ -0 ՁԵՌՆՊԱՀ -0

Լսեցին՝

ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ, ՍԱՆԱՀԻՆ ԿԱՅԱՐԱՆ ԹԱՂԱՄԱՍ, 14/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-002-0200-0047 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.00177 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21) ենթակետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ, 60-րդ հոդվածներով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի 6-րդ կետով, հաշվի առնելով, որ քննարկվող հողամասի ուրվագծային չափերն ու դիրքը թույլ չեն տալիս, այն դարձնել առանձին հրապարակային սակարկությունների առարկա, հիմք ընդունելով Անահիտ Սենիկի Պողոսյանի դիմումը, սեփականության իրավունքի N 08092020-06-0007 վկայականը, համայնքային սեփականության N 10122024-06-0006 վկայականը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Անահիտ Սենիկի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին կայարան թաղամաս, 18-7/1 հասցեում գտնվող ավտոտնակի զբաղեցրած 0.00243 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին կից, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին կայարան թաղամաս, 14/2 հասցեում գտնվող, 0.00177 հա մակերեսով հողամասը, ընդլայնման նպատակով, 14019 (տասնչորս հազար տասնինը) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել Անահիտ Սենիկի Պողոսյանին:

2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ Անահիտ Սենիկի Պողոսյանի հետ կնքելու հողամասի առք ու վաճառքի պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունված է. /կցվում է 175-Ա/

ԿՈՂՄ- 15 ԴԵՄ -0 ՁԵՌՆՊԱՀ -0

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂՊԱՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-060-0208-0079 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.04623 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՎԱՐԵԼԱՀՈՂՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հողային օրենսգքրի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով N 11122024-06-0015 վկայականը, Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, Հաղպատ գյուղի վարչական սահմանում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-060-0208-0079 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող հողատեսքի 0.04623հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապիցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության

գոտիներում, բնապահպանական արժեքներ կայացնող հողամասերում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հողամասի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չեն խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:
4. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասի աճուրդը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունված է. /կցվում է 176-Ա/

ԿՈՂՄ- 15 ԴԵՄ -0 ՁԵՌՆՊԱՀ -0

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔ ԱԼԱՎԵՐԴԻ, ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ԹԱՂԱՄԱՍ, ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 1/24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-002-0150-0427 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.00816 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով N 16122024-06-0045 վկայականը, Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Շահումյան փողոց, 1/24 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0150-0427 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00816 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել 435000 (չորս հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապիցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության

գոտիներում, բնապահպանական արժեքներ կայացնող **հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին,** չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հողամասի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չեն խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:
4. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասի աճուրդը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունված է. /կցվում է 177-Ա/

ԿՈՂՄ- 15 ԴԵՄ -0 ՁԵՌՆՊԱՀ -0

Ավագանու անդամներ՝

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ

ՍԻՄՈՆ ԶԱԽԱՐՈՎ

ՖԼՈՐԱ ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ

ՀՐԱՆՏ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՂՈՒԼՅԱՆ

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՍՄԲԱՏՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊԱՊՈՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱՄԱՋՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԲԱԴԱԼՅԱՆ

ԹԱԳՈՒՀԻ ՎԱՐՈՍՅԱՆ

ԱԲԵԼ ՏԻՏԱՆՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՌԱՄԱՋՅԱՆ

ՍԵՆԻԿ ՉԵՐՉԻՆՅԱՆ

ՏԵԼԵՄԱԿ ԱՂՎԱՆՅԱՆ

ԱՐԱՄ ՌԱՄԱՋՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆԸ

_____